րևը անդադար թափւում էր, թափւում, ձայնարկում վշտագին։

...Ո՛չ, ո՛չ, դա թուլութիւն է. պէտք է սթափուել. կեանքի հարուածների տակ ընկճւում է միայն տկարը. իսկ ուժեղը դիմադրում է, մարտնչում։ Անձնական երջանկութիւնը դարձաւ ցնորք, անհետ կորաւ։ Այժմ ինում է իրագործել մեր ուխտը...

Որպէս ամայի անապատի մէջ ծարաւից տանջուածին զովացնում է յստակ ցողը, ինձ մխիթարում է այն միտքը՝ թէ կը մեծանայ նորածին մանուկը, որին պիտի ժպտայ և՛ կեանքը, և՛ լոյսը, և՛ արևը...

Տիկ. Եկ. Բանաթուր

ԴՈՒ ՅՈԳՆԱԾ ԵՍ

Մենակ կ'երթայի, առաջս քարեր,
Բազմաթիւ քարեր, սեամած, դժնեայ...
Առաջ կ'երթայի, ու անթիւ խաչեր
Լուռ խոկում էին քարերի վրայ...

Ա՜խ, շիրիմները, ազիզ շիրիմներն՝
Մենակ ու տխուր ինձ կը նայէին
—Դու էլ մօտեցիր մեղմիկ հանգչելու,
Խեղճ, դու յոգնած ես, ինձի կ'ասէին...

Հայկունի